ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1960 Общественные науки

Գ. Մ. Խաչատրյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Հայ ժողովուրդը նշում է իր վերածննդի փառապանծ տարեթիվը՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի ծնունդ Սովետական Հայաստանի 40-ամյակը։ Սովետական կարգերի հաստատումը շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ։ Բազմաշարշար հայ ժողովուրդը մեկընդմիշտ փրկվեց ազգային և սոցիալական ճնշումից։ Նրա նյութական ու հոգևոր ուժերը զարգացման անսահման ասպարեզ ստացան։ Հայ ժողովուրդը պատմական սեղմ ժամկետում, շնորհիվ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման, ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական համերաշխ ընտանիքում դարերի թռիչք կատարեց. Հայաստանը դարձավ բարձր զարգացած ինդուստրիայի և խոշոր մեքենայացված գյուղատնտեսության երկիր, ծաղկեց հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում տալու Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումներից մեկը՝ սոցիալիստական հայ ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը Սովետական իշխանության 40 տարում։

Սոցիալիստական ինտելիգենցիայի ձևավորման ու զարգացման գործում Կոմունիստական պարտիան անշեղորեն ղեկավարվել և ղեկավարում է մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ դրույթներով։ Լենինիզմը սովորեցնում է, որ ոչ մի պետություն չի կարող կառավարվել առանց իր ինտելիգենցիայի։ Յուրաքանչյուր տիրապետող դասակարգ արտադրության հասարակական պրոցեսը ղեկավարելու համար պետք է ունենա արտադրա-տեխնիկական և կյանքի այլ բնագավառները կառավարելու համար հարազատ ինտելիգենցիա և ժամանակի ընթացքում նա իր միջավայրից ստեղծում է այն։ Այդ առավել ևս վերաբերում է իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգին, որը չի կարող դառնալ երկրի լիարժեք տերը, չապահովելով իր ղեկավարությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Նա չի կարող իր տնտեսական ու քաղաքական տիրապետությունն ամրապնդել և սոցիալիստական շինարարություն ծավալել, եթե չստեղծի սեփական ինտելիգենցիայի հրամանատարական կազմը, չտիրապետի գիտությանը և չսովորի տնտեսությունը կառավարել գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա։ Ինտելիգենցիան հանդիսանում է սոցիալիզմի և կոմունիզմի հաստատման ու բուռն զարգացման հասարակական կարևորագույն ուժերից մեկը։

Սովետական իշխանության թշնամիները, այդ թվում և Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստ-ռևիզիոնիստները, մենշևիկները, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցականները միաբերան պնդում էին, թե Ռուսաստանի նման տնտեսապես և կուլտուրապես հետամնաց գյուղացիական երկրում, ուր իշխում էր մանրբուրժուական տնտեսաձևը, սոցիալիզմն անխուսափելի

ձախողման է դատապարտված։ Թշնամիները առավել ևս համոզված էին, որ նման պարագաներում ՍՍՌՄ-ը, հատկապես նրա ծայրաստիճան հետամնաց ծայրամասերը չեն կարող սեփական ուժերով լուծել գիտա-տեխնիկական և վարչատնտեսական բազմաքանակ կադրերի ստեղծման մեծագույն ու դժվարին պրոբլեմը։

Լենինը ծաղրեց կապիտալիզմի սոցիալիստ լակեյներին, ցույց տվեց նրանց «մարգարեությունների» կատարյալ սնանկությունը։ Լենինը ապացուցեց, որ կապիտալիստական հասարակությունը սոցիալիստականի փոխակերպելու գործը բանվոր դասակարգը պետք է սկսի քաղաքական իշխանության նվաճումից, որի օգնությամբ պետք է ստեղծի անհրաժեշտ տնտեսական ու կուլտուրական մակարդակ, ինչպես նաև մասնագետ կադրեր, միաժամանակ իր կողմը նվաճի նախկինում բուրժուազիային ծառայած հին ինտելիգենցիային։

Պատմությունը հաստատեց Լենինի նշած ուղու ճշտությունը։ Սովետական ռևոլյուցիան գիտակցական ոգեշունչ ստեղծագործության բարձրացրեց տաղանդների ու ընդունակությունների անսպառ աղբյուր հանդիսացող ժողովրդին, որը մասսայական հերոսության հրաշքներ ցուցաբերեց ինչպես սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման, այնպես էլ նոր կուլտուրայի շինարարության գործում։

Հենվելով սովետական հասարակարգի անվիճելի առավելությունների վրա, Կոմունիստական պարտիան կարճ ժամանակամիջոցում լուծեց սոցիալիստական շինարարության ամենաբարդ և վճռական հարցերից մեկը բազմակողմանի կրթված ու դաստիարակված մեծաքանակ կադրերի ստեղծումը։ Սովետական ինտելիգենցիայի կադրերը ինչպես ողջ ՍՍՌՄ-ում, այնպես էլ Հայաստանում, ստեղծվել են երեք հիմնական ուղիներով։ Առաջին և գլխավոր ուղին, դա բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում բանվորներից և գյուղացիներից մասնագետների պատրաստումն էր. երկրորդը պրակտիկների առաջքաշումը ժողովրդական տնտեսության ու երկրի կառավարական տարբեր օղակներում. երրորդ ճանապարհը՝ հին ինտելիգենցիայի կադրերի օգտագործումն էր, նրանց վերադաստիարակումը և Սովետական իշխանության կողմը գրավելը։

* * *

Սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանի առջև ծառացան վիթխարի խնդիրներ։ Անհրաժեշտ էր մինչև վերջ ջախջախել պետական հին մեքենան և ստեղծել նորը, պրոլետարիատի դիկտատուրայի, նրա պետական օրգանների ապարատը, ամրապնդել այն և իսպառ հաղթահարել տնտեսական ու կուլտուրական դժվարությունները, սովն ու համաճարակները, կազմակերպել, գլխավորել ու առաջ մղել սոցիալիստական շինարարությունը։ Ըստ էության «ամայի տեղում», ինչպիսին էր դաշնակ կառավարությունից ժառանգած Հայաստանը, պետք էր ստեղծել սոցիալիստական տընտեսության նոր ձևեր, սոցիալիստական էկոնոմիկա և սոցիալիստական կուլտուրա։

Սոցիալիզմի շինարարության քառամյա ուղի անցած ՌՍՖՍՌ-ի փորձը ուսուցանում էր, որ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացի-

ները, քանի դեռ չունեն սեփական մասնագետ-կադրեր, սոցիալիստական վերափոխումները պետք է անպայման իրագործեն բուրժուական մասնագետների օգտագործմամբ, սոցիալիզմի կառուցման գործին ծառայեցնեն կուլտուրայի, գիտության և տեխնիկայի նախորդ էտապի նվաճումները, այդ բոլորը կապիտալիզմի զենքից վերածեն սոցիալիզմի զենքի։ «Հարկավոր է,— գրում էր Լենինը,—վերցնել ամբողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր գիտելիքները, արվեստը։ Առանց այս բանի մենք չենք կարող կոմունիստական հասարակության կյանքը կառուցել։ Իսկ այդ գիտությունը, տեխնիկան, արվեստը մասնագետների ձեռքին է և նրանց գլուխներում... Մեր մասսայական կշռով ստիպել բուրժուական մասնագետներին ծառայելու մեզ դժվար է, բայց կարելի է և եթե մենք այս անենք՝ կհաղթենք»[1]։

Չնայած լուրջ դժվարություններին, պարտիան լուծեց հին ինտելիգենցիայի նվաճման և Սովետական իշխանության հետ նրա համագործակցության առաջնահերթ խնդիրը։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հին ինտելիգենցիայի ստորին և միջին խավերը՝ ուսուցիչները, տեխնիկները, սակավաթիվ բուժպերսոնալը, մանր ծառայողները և այլն, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, անցան ժողովրդի կողմը և լծվեցին նոր կյանքի շինարարությանը։ Արդեն 1920 թ. դեկտեմբերի 19-ին Հայաստանի ուսուցչության Երևանում կայացած ընդհանուր ժողովը «Վերաբերմունք դեպի նոր իրավակարգը» հարցի առթիվ ընդունված բանաձևում նշում էր, որ ինքը «ողջունում է բանվորա-գյուղացիական միության վրա հիմնված խորհրդային իշխանությունն, իր լիակատար պատրաստակամությունն է հայտնում բովանդակ ուժերով աջակցելու և աշխատակցելու նրա շինարարական և ստեղծագործական աշխատանքին՝ դպրոցական և հասարակական ասպարեզում»[2]։ 1924 թ. դեկտեմբերին կայացած ուսուցչության Համահայաստանյան անդրանիկ համագումարը կրկին հավաստեց իր հավատարմությունը սոցիալիզմին, ժողովրդին։ Ինչ վերաբերում է ինտելիգենցիայի ավելի բարձր խավերին, ապա նրա շարքերում էլ գտնվեցին զգալի թվով ազնիվ և պրոգրեսիվ մարդիկ, որոնք ողջունեցին Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան, մեծագույն խանդավառությամբ ընդունեցին Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում և իրենց գիտելիքները, փորձը և տաղանդը ամբողջովին ի սպաս դրին վերածնված Հայաստանին, նրա բարգավաճմանը։ Այդ ուղին ընտրեցին նաև հայ ժողովրդի կողմից սիրված այնպիսի ականավոր գրողներ, պոետներ, գիտնականներ, արվեստի գործիչներ, արտիստներ, ինչպիսիք են Հ. Թումանյանը, Շ. Կուրղինյանը, Նար-Դոսը, Սպենդիարյանը, Ն. Տիգրանյանը, Ռ. և Ս. Մելիքյանները, Ա. Տիգրանյանը, Մ. Սարյանը, Թ. Թորոսոնյանը, Ա. Թամանյանը, Հ. Աբելյանը, Հ. Մանանդյանը, Հր. Աճառյանը, Լեոն, Մ. Աբեղյանը և շատ ուրիշներ։ Իրերի նման վիճակը ջարդ ու փշուր էր անում Երկրորդ Ինտերնացիոնալի և նրա էսեռա-մենշևիկյան ձայնակիցների այն պնդումը, որ իբրև Սովետական իշխանությունը չի կարող իր կողմը նվաճել հին ինտելիգենցիային և համագործակցել նրա հետ։ Հակառակ թշնամիների պնդումներին, ինտելիգենցիան ծառայեց Սովետական իշխանությանը և այդ այն պատճառով, որ սովետական ժողովուրդը, այդ թվում և հայ ժողո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 67։
[2] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 122, գործ 747, թերթ 2։

վուրդը, բացառիկ հոգատարությամբ էր վերաբերվում ինտելիգենցիայի արժեքավոր կադրերին, օգնում էր նրան, սովի ու փլուզման դժվարին պայմաններում ստեղծում էր բոլոր պայմանները նրա ստեղծագործական աճի ու աշխատանքի համար։

Կուլտուրական շինարարության վերաբերյալ Սովետական պետության առաջին դեկրետները և որոշումները հին ինտելիգենցիային խորապես համոզեցին, որ միայն սոցիալիզմն է գիտությանը տալիս լայն ասպարեզ, ազատագրում նրան բուրժուական կապանքներից ու կապիտալին ստրկանալուց։ Հանրահայտ է, որ Հայաստանի Հեղկոմը, իսկ վերակառուցվելուց հետո, Ժողկոմսովետը 1921 թվականին հրատարակեց մի շարք դեկրետներ տեխնիկական ուժերին, գյուղատնտեսներին, անասնաբույժներին, բժշկա-սանիտարական աշխատողներին, կարճ ասած՝ բոլոր մասնագետներին հաշվի առնելու, նրանց ուժերը նպատակահարմար օգտագործելու ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և նրա արդյունավետությունը բարձրացնելու գործում։ Հեղկոմի նախագահ Ալ. Մյասնիկյանի ստորագրած դեկրետներից մեկը, որը հենվում էր Սովետական Ռուսաստանի օրենքների վրա, սահմանում էր բարձր աշխատավարձ մասնագետների համար։ Դեկրետներից մեկում Հայաստանի Սովետական կառավարությունը բարձր է գնահատում ժողովրդական մասսաների լուսավորության գործում մայրենի գրականության դերն ու նշանակությունը։ Աշխատավորների ազատագրման ու դաստիարակության գործին ծառայող գրական-գեղարվեստական աշխատանքը խրախուսելու նպատակով Լուսժողկոմատին կից ստեղծվում է գրական-գեղարվեստական ֆոնդ։ Հայաստանում ապրող գրական-գեղարվեստական, ինչպես և արվեստի ու գիտության աշխատողների համար սահմանվում է հարվածային փայ և բարձր թոշակ[3]։

Հին ինտելիգենցիային Սովետական իշխանության կողմը գրավելու խնդիրը դիտելով որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի դասակարգային պայքարի ձևերից մեկը, պարտիան կիրառում էր ակտիվ վնասարար-կոնտրոլյուցիոն էլեմենտներին ջախջախելու և ազնիվ, լոյալ տարրերին համոզելու ու գրավելու քաղաքականությունը։

Հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սոցիալիզմի համար մղվող պայքարում ձեռք բերեց լուրջ հաջողություններ, հասավ ազգային էկոնոմիկայի և կուլտուրայի բուռն զարգացմանը։ Այդ բոլորը հիացմունք առաջ բերեցին հին ինտելիգենցիայի շարքերում։ Հայ ժողովրդի զավակները, չեզոք և տարագիր հայ ինտելիգենցիայի գործիչները, որ երբեմն տարակուսանքով էին վերաբերում Հայաստանի ազգային վերածննդի մասին Կոմունիստական պարտիայի արած ծրագրային հայտարարություններին, համոզվեցին, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել ազատ ու հրաշագործ կյանք։ Բնորոշ է մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանի օրինակը։ Գտնվելով արտասահմանում, Իսահակյանը 1935 թ. նոյեմբերի 5-ին Սովետական Հայաստան հղած նամակում գրում էր. «Այս 15 տարին հայկական բազմագան կյանքում դարերի ծանրության կշիռ ունեցավ... Ես չեմ գտնում մեր բազմադարյան տևողության մեջ ավելի հոյակապ մի շրջան, քան որ ունեցանք...

[3] Տես ՀՍԽՀ Դեկրետների և որոշումների ժողովածու, 1921, № 1-ից—13-ը։

Խորհրդային իրավակարգի պայմաններում ես փառավոր եմ տեսնում մեր երկրի ապագան... Հարյուր հազարավոր աշխատավոր իմ ընկերների հետ միասին ցանկանում եմ մեր բարձրացող հայրենիքին երջանկություն, արևշատություն, հավերժություն...»[4]։

Հայաստանի Սովետական կառավարության կոչով աշխարհի տարբեր մասերից ու երկրներից Հայաստան վերադարձան գրականության, արվեստի, գիտության ու կուլտուրայի բազմաթիվ դործիչներ ու մշակներ, այդ թվում՝ Ալ. Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, հազարավոր ուրիշ տարագիրներ, որոնք ձեռք ձեռքի տված հայ ժողովրդի հետ սկսեցին կառուցել նոր Հայաստանը։

Հին ինտելիգենցիայի օգտագործման հետ միասին, որը սակայն խիստ սակավաթիվ էր, և շատ հեռու էր սոցիալիզմի շինարարության պահանջները բավարարելուց, Հայաստանի Կոմպարտիան և Սովետական կառավարությունը ՍՄԿՊ-ի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան լուծելու ամենաբարդ խնդիրներից մեկը՝ բանվորներից ու գյուղացիներից սոցիալիստական ինտելիգենցիայի ստեղծմանն ու դաստիարակմանը։ Այդ ճանապարհին առաջնահերթ քայլը բարձրագույն ու միջնակարդ մասնագիտական դպրոցի ստեղծումն էր, որը, բառիս բուն իմաստով ծնունդ առավ Սովետական իշխանության առաջին իսկ օրերին։

Նորածին Հայաստանի Սովետական կառավարությունը՝ իր գոյության 18-րդ օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին, որոշեց ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում հիմնադրել Պետական համալսարան, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին։ Դա հայ իրականությանը մինչ այդ անծանոթ առաջին բարձրագույն դպրոցն էր։ Այդ այն ժամանակն էր, երբ ամայացած ու կրակի ճարակ դարձած հայ գյուղում սովահար ժողովուրդը կանաչ էր ուտում, երբ քաղաքներում ուտելու ոչինչ չէր ճարվում, փողոցներից հավաքում էին սովամահների դիակները, երբ ծնողներից ու օթևաններից զրկված տասնյակ հազարավոր որբեր թափառում էին ամայի երկրում ու սնունդ որոնում։

Այդպիսի պայմաններում լուրջ ծախսեր կլանող համալսարանի հիմնադրումը ոչ միայն մեր թշնամիները, այլև նույնիսկ շատ բարեկամներ գնահատեցին որպես ավելորդ շռայլություն։ Նրանք իրենց զարմանքն էին հայտնում այն մասին, որ տնտեսապես քայքայված, գաղթի ու քաղցի մատնված Հայաստանը լուսավորության գործի, բարձրագույն դպրոց հիմնելու վրա վիթխարի միջոցներ է ծախսում։ Չէ՞ որ ռեսպուբլիկան ծով կարիքներ ուներ։ Սակայն եթե հայ ժողովուրդը թույլ տվեց նման «շռայլում», եթե ռեսպուբլիկայի տնտեսական շինարարության սկզբնավորությունը զուգադիպեց համալսարանի հիմնադրմանը, դա բխում էր այն բանի պարզ գիտակցումից, որ երկրի գիտա-տեխնիկական միտքը պետք է սերտորեն շաղկապվի տնտեսական շինարարության խնդիրների հետ։ Հայ ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս և սովետական երկրի մյուս ժողովուրդների եղբայրական օգնությամբ ծանր պայմաններում ստեղծեց գիտությունն ու մասնագետ կադրերի դաստիարակման իր հոյակապ դարբնոցը՝ Պետական համալսարանը, որից, Ալ. Մյասնիկյանի պատկերավոր արտահայտությամբ, «կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի երկրի բոլոր ծայրերը»։ Համա-

[4] «Խորհրդային Հայաստան», 29 Նոյեմբերի, 1935։

լսարանը դարձավ հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման սիրտը, ազգային կադրերի պատրաստման ու դաստիարակման կենտրոնը, ռեսպուբլիկայի գիտա-տեխնիկական մտքի առաջին հզոր զարկերակը։

1921 թ. հիմնվում է երաժշտական ստուդիան, որը 1923 թվականին վերանվանվեց Պետական կոնսերվատորիա, 1923 թ. հիմնվում է Գիտական տրոպիկական ինստիտուտը, 1925 թվականին կազմակերպվում է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտը և այլն։

Այդ նույն ժամանակ հիմնադրվում է միջնակարգ մասնագիտական դպրոցը, որի նպատակն էր միջին որակի բազմաքանակ մասնագետ-կադրեր պատրաստել ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների համար։ 1921—1925 թթ. մեկը մյուսի հետևից Երևանում, Լենինականում, ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում ու շրջանային կենտրոններում բացվում են ինդուստրիալ, մանկավարժական, գյուղատնտեսական, գեղարվեստական և այլ տիպի բազմաթիվ տեխնիկումներ։ Միաժամանակ բացվում էին կարճատև պրոֆտեխնիկական կուրսեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ։ 1922/23 ուստարում Պետական համալսարանում, Կոնսերվատորիայում և ռեսպուբլիկայում գործող տեխնիկումներում ուսանում էին 1146 մարդ[5], իսկ 1925 թ. վերջին ուսանողության թիվը հասավ մոտ 4.000-ի։ 1924/25 ուստարում համալսարանը տվեց առաջին շրջանավարտները՝ թվով 58 հոգի։

Սովետական բարձրագույն դպրոցի շինարարության հրատապ խնդիրներից մեկը, որը պարտիան հաջողությամբ լուծեց, ուսանողության սոցիալական կազմի արմատական փոփոխումն էր։ Սովետական իշխանությունը ԲՈՒՀ-երի դռները հենց սկզբից լայնորեն բացեց բանվորների և գյուղացիների, նրանց երեխաների առաջ։ Սակայն, ԲՈՒՀ ընկնելու համար անհրաժեշտ էր կրթական պատրաստության որոշ մինիմում, որպիսին աշխատավորների բացարձակ մեծամասնությունը չուներ։ Ուստի պատահական չէ, որ առաջին տարիներին ԲՈՒՀ-երում և մասնագիտական դպրոցներում բանվորները և աշխատավոր գյուղացիները շնչին տոկոս էին կազմում։ Նման վիճակը անհանդուրժելի էր։

Բարձրագույն դպրոցը բանվորականացնելու, նրա համար համապատասխան կրթված ռեզերվներ պատրաստելու նպատակով Հայկական ՍՍՌ կառավարության որոշմամբ (որը ելնում էր ՌՍՖՍՌ փորձից) 1923 թ. Երևանում և Լենինականում, որոշ ժամանակ անց ռեսպուբլիկայի նաև այլ արդյունաբերական կենտրոններում, կազմակերպվեցին բանվորական ֆակուլտետներ՝ բանֆակներ, որոնք դարձան ԲՈՒՀ-երը և ԲՏՈՒՀ-ները բանվորա-գյուղացիական կրթված երիտասարդությամբ համալրելու օջախներ։

Մատնացույց անելով բարձրագույն դպրոցի լուրջ նվաճումները մեր երկրում, 1925 թ. Սովետական Միություն այցելած Արևմուտքի ուսուցիչների առաջին պատվիրակությունը հայտարարեց. «Բարձրագույն դպրոցի կյանքում ամենաթանկարժեք նորամուծությունը մենք համարում ենք բանվորին, որպես ԲՈՒՀ-ի ունկնդրի։ Պրոլետարիատը նվաճել է բարձրագույն դպրոցը և ակտիվորեն մասնակցում է գիտա-հետազոտական աշխատանքների զարգացմանը»[6]։

---

[5] ՀՍՍՀ Ժողովրդական Կոմիսարիատների 1922/23 թթ. հաշվետվությունը, Երևան, 1925, էջ 347։

[6] Журнал „Народное образование", № 9, стр. 27.

Պարտիայի ու կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ուսանողության սոցիալական կազմը կրեց լուրջ փոփոխություն, աճեց նրա պարտիական-կոմերիտական կորիզը, ԲՈՒՀ-երում ուժեղացավ պարտիայի գաղափարական-քաղաքական աշխատանքը։ Արդյունքը եղավ այն, որ աստիճանաբար եկան մարքսիստական-լենինյան աշխարհայեցողության տեր բարձրորակ մասնագետ կադրեր, որոնք բոլոր թելերով կապված էին ժողովրդի հետ։ Ռեսպուբլիկայի 2 ԲՈՒՀ-երը և 12 տեխնիկումներն ու միջնակարգ մասնագիտական դպրոցները, որտեղ 1927/28 ուստարում սովորում էին 3,3 հազար ուսանող, մինչև առաջին հնգամյակը պատրաստեցին 270 կարմիր մասնագետներ[7]։

Ժողովրդի ծոցից ելած և նրա հետ սերտորեն կապված, ժամանակակից գիտության ու տեխնիկայի մակարդակի վրա կանգնած նոր, սովետական մասնագետ կադրերի, հատկապես արտադրա-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու խնդիրը ավելի սուր կերպով ծառացավ երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման պարտիայի լենինյան պլանի իրականացման ժամանակաշրջանում։ Բուռն տեմպերով ծավալվող նոր արդյունաբերական կենտրոնների շինարարությունը, գյուղում տասնյակ հազարներով խոշոր կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը, նորագույն տեխնիկական բազայի վրա ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը համոզիչ կերպով ցույց տվին, որ Սովետական պետությունը սոցիալիզմի հաղթական ծավալումն շինարարությունը չի կարող գլուխ բերել առանց կուլտուրական ռևոլյուցիայի իրականացման, առանց սոցիալիզմի գործին նվիրված, բարձր որակավորում ունեցող մեծաքանակ մասնագետների առկայության։ Զարգացման նոր ժամանակաշրջանում անհրաժեշտ էին այնպիսի կադրեր, որոնց վրա Սովետական իշխանությունը կարողանար հենվել լիովին ու ամբողջությամբ։

Համկ(բ)Պ Կենտկոմի 1928 թ. Հուլիսյան պլենումը մատնանշեց, որ «նոր մասնագետների պատրաստումը դառնում է ամբողջ պարտիայի կարևորագույն խնդիրը»[8]։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը հետագա տարիներին կայացրած բազմաթիվ որոշումներում (Համկ(բ)Պ Կենտկոմի 1929 թ. Նոյեմբերյան պլենումը, 1930 թ. սեպտեմբերի 6-ի, 1936 թ. հունիսի 23-ի և այլն) խնդիր դրին արագացնել սոցիալիստական արդյունաբերությունը ղեկավարելու ընդունակ նոր տեխնիկա-արտադրական ինտելիգենցիայի ստեղծման տեմպերը։

Գործողության ուղեցույց ունենալով կադրերի մասին Պարտիայի Կենտկոմի և կառավարության որոշումները և հաշվի առնելով ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի հարաճուն պահանջմունքները, Հայաստանի պարտիական կազմակերպությունները հաջողությամբ լուծեցին ազգային ինտելիգենցիայի և մասնավորապես տեխնիկական մասնագետների ստեղծման պրոբլեմը։ Ընդարձակվեց ԲՈՒՀ-երի և տեխնիկումների ցանցը։ 1928 թ. նոյեմբերին Երևանում բացվեց Անդրֆեդերացիայի անվան Անասնաբուժական ինստիտուտը։ Պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետների բազայի վրա 1930 թ. կազմակերպվեցին Գյուղատնտեսական,

---

[7] Народное хозяйство АрмССР, ст. сборник, Ереван, 1957, стр. 149.

[8] ՍՄԿՊ-ն բանաձևերում, մաս II, էջ 657։

Բժշկական, Շինարարական (այժմ Պոլիտեխնիկական), Մանկավարժական ինստիտուտները։ Ռեսպուբլիկայի քաղաքներում, ավաններում, շրջանային կենտրոններում հիմնադրվեցին բազմաթիվ տեխնիկումներ և մասնագիտական դպրոցներ։ 1932/33 ուստարում արդեն գործում էին 9 ԲՈՒՀ և 65 տեխնիկում, որտեղ սովորում էին 11.081 ուսանող։ Այս թվի մեջ չէին մտնում 11 բանֆակները՝ 2644 ուսանողներով[9]։ Գնալով ընդլայնվում էր երեկոյան և հեռակա կրթության սիստեմը։

Առաջին հնգամյակի տարիներին, որը «կադրերի սովը» հաղթահարելու շրջան էր, առավելագույն ուշադրություն դարձվում էր խնդրի քանակական կողմին։ Սակայն, երկրորդ հնգամյակում արտադրության նորարարների մասսայական շարժման ծագման ու ծավալման կապակցությամբ ուղղակի զգացվեց մասնագետների պատրաստման գործում եղած լուրջ թերությունները։ Ոչ մի բոպե չթուլացնելով կադրերի պատրաստման քանակական տեմպերը, պարտիան ծանրության կենտրոնը փոխադրեց մասնագետների պատրաստման որակական ցուցանիշների վրա, խնդիր առաջադրելով, որպեսզի արտադրա-տեխնիկական կադրերը գտնվեն ժամանակակից գիտության ու տեխնիկայի բարձրության վրա, լավ իմանային սոցիալիստական տնտեսության զարգացման ու ղեկավարման հիմունքները։

1935 թվականին պարտիան առաջադրեց «Տեխնիկային տիրապետած կադրերն են որոշում ամեն ինչ» լոզունգը, որը նշանակում էր բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության կուլտուր-տեխնիկական մակարդակի ընդհանուր վերելքի գիծ՝ մասնագետ-կադրերի պատրաստման քանակական կողմի հետ միասին նրանց որակական ցուցանիշների արմատական բարելավում։

Սովետական ինտելիգենցիայի կադրերի հարցի լուծման գլխավոր պայմանը հանդիսացավ մեր երկրում կատարված կուլտուրական ռևոլյուցիան։ ՍՍՌՄ-ում լիկվիդացվեց անգրագիտությունը, կիրառվեց պարտադիր քառամյա և յոթնամյա կրթությունը, բուռն տեմպերով աճեց միջնակարգ և բարձրագույն կրթությունը, լայնորեն զարգացավ պրոֆեսիոնալ ուսուցումը։ Ամբողջ երկրում ծավալվեց ժողովրդական ամենալայն մասսաների կուլտուր-կրթական հզոր վերելք, որի շնորհիվ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության կուլտուր-տեխնիկական մակարդակի, նրանց հոգևոր հարաբերությունների բնագավառում տեղի ունեցան ամենաբարդ ու հոյակապ տեղաշարժեր։ Այդ ամենը արմատապես փոխեցին սովետական ինտելիգենցիայի ձևավորման պայմանները, նրա կազմը և սոցիալ-քաղաքական դեմքը։

Շնորհիվ Հայաստանում կատարված կուլտուրական ռևոլյուցիայի, պարտիայի ու կառավարության ամենօրյա հոգատարության, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցների միջոցով կադրերի պատրաստումը հասավանանախընթաց զարգացման։ Բավական է ասել, որ Հայաստանի ԲՈՒՀ-երը նախապատերազմյան 20 տարիներին ժողովրդական տնտեսությանը տվեցին 7268 մասնագետ, իսկ տեխնիկումներն ու այլ միջնակարգ մասնագիտական դպրոցները նույն ժամանակամիջոցում պատրաստեցին 13.300 միջին որակի մասնագետներ[10]։ Երկու տասնամյակում ավելի քան 20 հազար մասնագետ կադրեր. դա սովետահայ ինտելիգենցիայի մի ստվար ջոկատ էր, որը պատ-

[9] Սոց. շինարարությունը Հայկական ՍՍՌ-ում. Երևան, 1940, էջ 113։
[10] Նույն տեղում, էջ 114, 115։

բաստվեց և դաստիարակվեց ՀԿՊ-ի, հայ ժողովրդի ջանքերով։ Ընդսմին, Հայաստանի ինտելիգենցիայի շարքերը համալրվում էին նաև այն մասնագետ կադրերով, որոնք ավարտում էին ՌՍՖՍՌ-ի և միութենական մյուս ռեսպուբլիկաների ԲՈՒՀ-երը։ Հարկ ենք համարում առանձնապես ընդգծել Մոսկվայի և Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատությունների, ռուս մեծ ժողովրդի գիտնականների դերը հայ ազգային մասնագիտական կադրերի աճման ու դաստիարակման գործում։

Բարձրագույն ու միջնակարգ կրթության գործի կազմակերպման և նոր ինտելիգենցիայի ստեղծման հետ միասին Հայաստանի Կոմունիստական պարտիան ու կառավարությունը աճեցրին գիտնականների, գրողների, կոմպոզիտորների, կերպարվեստագետների, թատերական ու կինո արվեստի աշխատողների տաղանդավոր կադրեր։

Սոցիալիստական ինտելիգենցիայի կազմակերպման ու զարգացման գործում կարևոր դեր խաղաց պրակտիկների առաջքաշման ու ուսուցման գործարար ուղին, որը հատուկ է միայն սոցիալիստական հասարակարգին։ Մ. Ի. Կալինինը մատնանշել է. «Մեր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան կազմվում է ոչ միայն բարձրագույն դպրոց անցած մարդկանցից,— նա հավաքագրվում է նաև մեր ձեռնարկությունների պրակտիկ աշխատողների, որակյալ բանվորների միջից, բանվոր դասակարգի կուլտուրական ուժերից»[11]։

Սովետական և պարտիական ապարատի բազում տաղանդավոր կազմակերպիչներ, տնտեսական ձեռնարկությունների հարյուրավոր ու հազարավոր հմուտ, բանիմաց ղեկավարներ անցել են իրենց կազմավորման այդ իսկական դեմոկրատական ճանապարհը, համալրելով ու ստվարացնելով սոցիալիստական հայ ինտելիգենցիայի շարքերը։ Բավական է ասել, որ 1928-ից 1939 թթ. Հայաստանի կոլտնտեսային-սովխոզային դպրոցի ու մասսայական դասընթացների միջոցով պատրաստված և արտադրության պրոցեսում առաջքաշված կադրերը կազմեցին 110.200 մարդ, այդ թվում 2.300 կոլտնտեսությունների նախագահներ, 6.500 հաշվապահներ, 2.100 պրակտիկ անասնաբույժներ, 100 հողաշինարարներ և այլն[12], կադրեր, որոնք կարևոր դեր խաղացին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և հետագա զարգացման գործում։ Զգալի տոկոս էին կազմում պրակտիկները։ Իրականացան մեծ Լենինի իմաստուն խոսքերն այն մասին, որ միայն սոցիալիզմն է հնարավորություն տալիս ժողովրդին ծավալելու իր հոգևոր ուժերը և տաղանդները, որոնց կապիտալիզմը ճնշում ու խեղդում է հազարներով ու միլիոններով։

Սոցիալիստական հասարակարգը ստեղծեց ժողովրդից սերած, ընդհանուր շահերով ու խնդիրներով ժողովրդի հետ սերտորեն կապված, հավատով ու անձնուրաց կերպով նրան ծառայող նոր ինտելիգենցիա, որը նշանակալից ներդրում կատարեց սոցիալիզմի շինարարության, երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, հայրենիքի պաշտպանունակության ամրապնդման, աշխարհում ամենաառաջավոր սոցիալիստական կուլտուրայի, գիտության, գրականության ու արվեստի զարգացման գործում։ Հայրենական

[11] Մ. Ի. Կալինին. Խորհրդային ինտելիգենցիայի խնդիրների մասին. Երևան, 1939, էջ 8։

[12] Տե՛ս Սոց. շինարարությունը Հայկական ՍՍՌ-ում, էջ 90։

Մեծ պատերազմի տարիներին ինտելիգենտները ռազմաճակատում և թիկունքում բանվորների և գյուղացիների հետ ձեռք-ձեռքի տված, հերոսաբար կռվում և աշխատում էին հանուն սոցիալիստական Հայրենիքի։

Հաղթանակած սոցիալիզմի բազայի վրա շարունակվում է սովետահայ ինտելիգենցիայի բոլոր ջոկատների, այդ թվում նաև մասնագետ-պրակտիկների նախկինում չտեսնված քանակական և որակական-հետագա աճ։

Ներկայումս Սովետական Հայաստանում գործում են 11 բարձրագույն և մոտ 40 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ ավելի քան 32 հազար սովորողներով։ Բնակչության 10 հազար շնչին ընկնող ուսանողների թվով Հայաստանը գերազանցում է ամենազարգացած կապիտալիստական երկրների, այդ թվում և ԱՄՆ-ի մակարդակը։ Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում ռեսպուբլիկայի բարձրագույն ու միջնակարգ հաստատությունները երկրին տվել են ավելի քան 100 հազար մասնագետ։ Այդ ժամանակամիջոցում Պետական համալսարանը պատրաստել է 9396, Պոլիտեխնիկական ինստիտուտը՝ մոտ 6500 ամենատարբեր պրոֆիլի մասնագետներ։ 1913 թ. Հայաստանում կար 73 բժիշկ, 1146 ուսուցիչ։ Նախասովետական հայ գյուղը չուներ գյուղատնտեսական մասնագետներ։ 1957 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին մոտ 6000 ինժեներ, 3500 գյուղատնտես, զոոտեխնիկ և անասնաբույժ, ավելի քան 3700 բժիշկ, 18.000 մանկավարժ, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մոտ 30 հազար զանազան մասնագետներ[13]։ Ներկայումս Հայաստանում ավելի շատ ուսուցիչներ կան, քան 1919 թ. աշակերտներ։ Ինտելիգենցիայի այդ բազմահազարանոց բանակը, որն ընդունակ է հաջողությամբ լուծելու արտադրական, տեխնիկական ու գիտական բարդ հարցերը, հայ ժողովրդի փառքն ու պարծանքն է, նրա թանկագին հարստությունը։ Նոր, սոցիալիստական ինտելիգենցիայի ստեղծման ու աճեցման գործում արտահայտվեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի կենսարար ուժը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բացառիկ բարենպաստ պայմաններ ստեղծեց գիտության զարգացման, գիտա-հետազոտական հիմնարկությունների գործունեության և գիտա-տեխնիկական կադրերի աճեցման ու դաստիարակության համար։ Եթե տնտեսական բնագավառում դաշնակ կառավարողներից «ժառանգեցինք» աղքատություն, սով և ավերակներ, ապա գիտության ասպարեզում ժառանգելու ոչինչ չունեինք։ Հայաստանում մինչև սովետական կարգերի հաստատումը գիտական ոչ մի հիմնարկություն չկար։ Սակավաթիվ հայ գիտնականները իրենց ուժն ու դիտելիքները գործադրում էին Հայաստանի սահմաններից դուրս։ Անգամ հայոց լեզվի և Հայաստանի պատմության հարցերը մեր գիտնականների կողմից գերազանցապես մշակվում էին Հայաստանից դուրս գործող գիտական կենտրոններում։

Հայաստանը գիտական մտքի հին երկիր է, որի նյութական ու հոգևոր կուլտուրայի պատմությունը սկիզբ է առնում դարերի խորքից։ Հայ ժողովուրդը մարդկությանը տվել է գիտության ու կուլտուրայի պայծառ դեմքեր, մեծ մտածողներ՝ Մ. Խորենացուն, Դ. Անհաղթին, Ան. Շիրակացուն, Նարեկացուն, Ֆրիկին, Սայաթ-Նովային, Աբովյանին, Նալբանդյանին, Թումանյանին, Կոմիտասին և շատ ու շատ ուրիշների։ «Հայերն իրենց հազարավոր տա-

[13] «Սովետական Հայաստան», 29 Նոյեմբերի, 1957։

րիների պատմական կյանքի ընթացքում ստեղծել են ինքնուրույն կուլտուրա, իրենց գանձերն են ներդրել գիտության մեջ և աշխարհին թողել են հարուստ գրականություն»,—ասել է Վ. Բրյուսովը։ Այնուամենայնիվ, այդ բոլորով հանդերձ, գիտությունը հայերիս մեջ եղել է պատահական, անհատական գործ և անապահով։ Ինչքան հանճարեղ մտահղացումներ են մահացել դեռևս լույս աշխարհ չեկած։ Իրավացի էր «հայոց վշտի» մեծ երգիչ, մեծատաղանդ բանաստեղծ և հասարակական գործիչ Հ. Թումանյանը, ընդգծելով, որ ինքը, հայ ազգը հանգիստ մտածելու ու ստեղծագործելու ժամանակ չի էլ ունեցել։

Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո պարտիայի ու կառավարության հոգատարության և ջանքերի շնորհիվ ստեղծված բարենպաստ պայմաններում հնարավոր դարձավ ժողովրդի թողած հարուստ կուլտուրական արժեքները ժառանգել և հաստատուն քայլերով ընթանալ դեպի հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ մինչ այդ չտեսնված գիտության և տեխնիկական մտքի բուռն զարգացումը։

«Պատանեկական տարիքից,— գրել է մեծատաղանդ գիտնական Հր. Աճառյանը,—ես նվիրվել եմ գիտության և իմ ամբողջ հոգևկան աշխարհը կենտրոնացած է եղել ընդհանրապես լեզվի և մասնավորապես հայ լեզվի ուսումնասիրության վրա։ Մի երազ միայն ունեի ես. այդ էր լինել մի այնպիսի տեղում, ուր կարողանայի ազատորեն նվիրվել իմ սիրած մասնագիտության, և մի այնպիսի հաստատության մեջ, ուր կարողանայի իմ ուսումնասիրության արդյունքներին հաղորդակից անել գոնե մի տասնյակ հետաքրքրվող սաների։ Այդ երազի իրականացումը ես վայելում եմ այժմ այս երկրում, մեր Պետական համալսարանում, Հայաստանի Խորհրդային Հանրապետության հովանավորության ներքո»[14]։

Հայաստանը, որը մինչև ռևոլյուցիան ոչ մի ԲՈՒՀ ու գիտական ինստիտուտ չուներ, այժմ իրավամբ հպարտանում է իր բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկներով, Գիտությունների ակադեմիայով, բազմաթիվ ԲՈՒՀ-երով, որտեղ այժմ աշխատում են 4084 գիտական և գիտամանկավարժական կադրեր, որից 158-ը գիտությունների դոկտորներ ու 1431-ը թեկնածուներ են[15]։ Ռեսպուբլիկայում աճել է գիտական ու տեխնիկական մեծատաղանդ ինտելիգենցիա, իսկ բնական ու ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում աշխատող մի շարք գիտնականների անունները լայնորեն հայտնի են ամբողջ աշխարհում։

Գիտությունների ակադեմիան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ միասին վիթխարի ստեղծագործական աշխատանք է կատարում սոցիալիստական շինարարության պրակտիկայի կողմից առաջադրվող պրոբլեմները, ամենաբարդ գիտա-տեխնիկական խնդիրները լուծելու ուղղությամբ, խնդիրներ, որոնք նոր ուղիներ, նոր հեռանկարներ են բացում արտադրության առաջ։ Ռեսպուբլիկայում լայն զարգացում են ստացել ժամանակակից գիտության այնպիսի կարևորագույն ճյուղեր, ինչպես աստրոֆիզիկան, բարձրագույն մաթեմատիկան, քիմիան, ֆիզիկան, ագրոքիմիան, պատմությունը, լեզվաբանությունը և այլն։

---

[14] «Խորհրդային Հայաստան», 29 Նոյեմբերի, 1924։

[15] «Սովետական Հայաստան», 6 հուլիսի, 1960։

* * *

Վ. Ի. Լենինը հանճարեղորեն մատնանշել է, որ ինտելիգենցիան «որպես առանձին միջնախավ կմնա, մինչև որ հասնենք կոմունիստական հասարակության զարգացման ամենաբարձր աստիճանին...»[16]։ Ընդ որում, Լենինը ապացուցել է, որ կոմունիզմի ժամանակ հատկապես կաճի արտադրա-տեխնիկական ինտելիգենցիայի դերը։ Եվ իրոք, ՍՄԿՊ XXI համագումարի կողմից սահմանված տնտեսական, սլեսական և կուլտուրական խնդիրների լուծման գործում այժմ քան երբեք բացառիկ պատասխանատու ու պատվավոր դեր է պատկանում մեր փառապանծ ինտելիգենցիային։ Գիտնականների ու ինժեներների, կուլտուրայի գործիչների ստեղծագործական մտքի նոր համարձակ թափը, գյուղատնտեսների, ուսուցիչների, բժիշկների և ինտելիգենցիայի մյուս ջոկատների բազմաքանակ բանակի ակտիվության աճումը ՍՍՌՄ-ում կոմունիստական հասարակության կառուցման ժամկետների կրճատման կարևորագույն պայմանն է։ Ահա թե ինչու ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. յոթնամյա պլանը էկոնոմիկայի, կուլտուրայի և ժողովրդի բարեկեցության նոր հզոր վերելքի հետ միասին նախատեսում է ինտելիգենցիայի և հատկապես ինժեներա-տեխնիկական-արտադրական ինտելիգենցիայի որակական և քանակական հուժկու աճ։

Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերությունը յոթնամյակում աճելու է 2,2 անգամ։ Ռեսպուբլիկայում ստեղծվում ու ստեղծվելու են արդյունաբերական նոր ճյուղեր, շարք են մտնելու արտադրական նոր կարողություններ։ Այդ հոյակապ խնդիրների լուծման ապահովումը պահանջում է ավելի ընդլայնել ու բարելավել մասնագետների պատրաստումը։ Բավական է բերել հետևյալ օրինակը։ Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտը 1965 թ. կունենա ավելի քան 7000 ուսանող, 1959/60 ուստարում սովորող մոտ 2900-ի փոխարեն։ Ինստիտուտը յոթնամյակում պատրաստելու է նաև նոր պրոֆիլի մեծ թվով մասնագետներ։

Յոթնամյա պլանի կոնտրոլ թվերի համապատասխան բուռն զարգացում է ապրում երեկոյան և հեռակա ուսուցումը։ Արդեն 1959 թ. վերջին բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում առանց արտադրությունից կտրվելու սովորում էր ավելի քան 10 հազար մարդ։ Ռեսպուբլիկայի շատ արդյունաբերական ձեռնարկություններ հանդիսանում են յուրահատուկ ուսումնական կոմբինատներ, որտեղ հարյուրավոր բանվորներ առանց արտադրությունից կտրվելու ստանում են բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն, որտեղ ռեալ կերպով վերանում են մտավոր ու ֆիզիկական աշխատանքի տարբերությունները։ Այսպես, օրինակ, Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանին կից գործում են էլեկտրամեխանիկական տեխնիկումի ֆիլիալը և երեկոյան բանվորական դպրոցը։ 1959/60 ուստարում առանց արտադրությունից կտրվելու բարձրագույն և միջնակարգ կրթություն էին ստանում 490 բանվոր։ 1960 թ. սեպտեմբերից գործարանին կից գործում է Պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիլիալը։ Գործարանը միաժամանակ և գիտական կենտրոն է, որին կից գործում է էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական

---

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 224։

ֆիլիալը՝ 248 գիտաշխատողով։ Ինտելիգենցիայի կադրերի իսկական դարբնոցներ են Ս. Մ. Կիրովի անվան, Ջերժինսկու անվան հաստոցաշինական, Ալյումինի և այլ գործարանները։

Սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ընթանում է տեսությունը պրակտիկայի, ուսուցումը արտադրողական աշխատանքի հետ սերտորեն միացնելու հիման վրա։ Դրանում վճռական դեր է խաղալու «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ՍՍՌՄ-ում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքի ոգով բարձրագույն և միջնակարգ դպրոցի վերակառուցումը։

Սովետական Միությունում, այդ թվում և Հայաստանում, աճում է ոչ պրոֆեսիոնալ մասսայական ինտելիգենցիան։ Արդյունաբերության, տրանսպորտի և էկոնոմիկայի մյուս ճյուղերում դեպի կոմունիզմ կատարվող մեր առաջընթացին համապատասխան բազմապատկվում են արտադրության նորարարների, գյուտարարների և ռացիոնալիզատորների շարքերը։ 1959 թ. նրանց թիվը ռեսպուբլիկայում հասավ 6782 հոգու։ Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը գիտության ու տեխնիկայի շատ բնագավառների ներկայացուցիչների հետ միասին իր շարքերն է ընդգրկել և շարունակում է ներառել հազարավոր բանվորների, գյուղացիների, ռացիոնալիզատորների, վարպետների ու ենթավարպետների, կոլտնտեսական սելեկցիոներների, կոլտնտեսության նախագահների ու բրիգադավարների, մեխանիզատորների, որոնք օգտագործելով ընկերության բարձր ամբիոնը, լայն մասսաներին հաղորդում են առաջավոր փորձը, իրենց գիտելիքները։ Այդ բանվորներն ու կոլտնտեսականները, որոնք անմիջական աշխատանքը զուգակցում են հասարակական-քաղաքական և պետական գործունեության հետ, պրոֆեսիոնալ ինտելիգենտներին հավասար գրքեր ու բրոշյուրներ են գրում, նոր մեքենաներ ու սարքավորումներ հնարում կամ հները կատարելագործում, նորարարական առաջարկություններով բարձրացնում արտադրության տեխնոլոգիան ու բազմապատկում արտադրանքի թողարկումը։ Տվյալ դեպքում նրանք հանդես են գալիս որպես մտավոր աշխատանքի ներկայացուցիչներ, իսկական ինտելիգենտներ։ Կուլտուրայի համալսարանների, որակավորման բարձրացման կուրսերի, հեռակա և երեկոյան ուսուցման ցանցի ծավալումը, գործարան-բտուհների կազմակերպումը, Կուլտուրայի ճակատում իսկական նորարարության բազմաթիվ դրսևորումները հանդիսանում են ինտելիգենցիայի քանակական ու որակական աճի նոր օղակներ։

«Մենք ձգտում ենք բնակչության բոլոր խավերին ինտելիգենտ դարձնել։ Այդ մեր իդեալն է»,—ասել է Մ. Ի. Կալինինը։ Եվ այդ իդեալը իրականանում է մեր աչքի առաջ։ Նրա իրականացման լավագույն երաշխիքը մեր անծայրածիր երկրում նոր մասշտաբներով ու խորությամբ շարունակվող կուլտուրական ռևոլյուցիան է, որը կապահովի ապագա, բազմակողմանի կրթված ու ներդաշնակ զարգացած մարդիկ դաստիարակելու խնդիրը։ Կոմունիստական հասարակարգի մարդիկ կլինեն բազմակողմանիորեն կրթված, բարձր կուլտուրայով, ինտելիգենտ մարդիկ, որոնք կկարողանան զուգակցել մտավոր և ֆիզիկական աշխատանքը։ Ինտելիգենցիան որպես սոցիալական առանձին խավ—այլևս չի լինի, կվերանա մարդկանց բաժանումը հասարակական դասակարգերի։ Դեպի այդ է տանում անցումը սոցիալիզմից՝ կոմունիզմին։

Սովետական բազմազգ ինտելիգենցիան իր մեծագործ ստեղծագործություններով բազմապատկում է կոմունիզմի հռչակը, նրա գերազանցությունը և կենսարար ուժը կյանքի բոլոր բնագավառներում, վիթխարի խոյանքներով առաջ է մղում կոմունիստական հասարակության լուսաշող շենքի կառուցումն արագացնող սոցիալիստական աշխարհահռչակ գիտությունը, տեխնիկան, կուլտուրան և արվեստը։ Իրականացել է Վ. Ի. Լենինի մարգարեական կանխատեսությունը. «Գիտության ներկայացուցիչների, պրոլետարիատի և տեխնիկայի միության առաջ չի կարող դիմանալ և ոչ մի մութ ուժ»[17]։

[17] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 512։